

փայլին Տիզեան ազգատոհմին պատմութեան զոգցես մէն մի էջերուն վրայ. որ եւ պատճառ եղած են այս քազմանճիւղ հին զարմին շքեղ փառաւորութիւն եւ պերճ անուն մը ժառանգելու. անուն մը որուն պայծառութիւնն դարերու շրջաններ ի զուր պիտի ջանան մթագնել, եւ ժամանակի ժանգաճարիչ ակոսներն պիտի չկարենան կրծել զայն:

Օսմանեան Պետութեան մէջ շատ քիչ ազգատոհմ կրնայ համբուիլ, որ իւր ժամանակին ճախող քախտին դաժան երեսն տեսնելու ստիպուելով հանդերձ, կրցած ըլլայ օսմանեան քաղաքակրթութեան պատմութեան մէջ իւր առաջին փառաւոր դիրքը քանի մը դար անխախտ պահել: Այս պանծալի քացառութիւնը կը տեսնենք Տիզեան ազնուական գերդաստանին վրայ: